

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՑՈՒՄ

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա 2022թ. հունիսի 23-ին, ժամը՝ 11:00-ին ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ, ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 4 ՀԱՍՑԵՈՒՄ

ԱՃՈՐԴՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող գույքերը

Հ/Հ	Լոտի հերթական համարը	Գույքի (լոտի) անվանումը	Գույքի (լոտի) գտնվելու վայրը	Գույքի գնահատված արժեքը /ՀՀ դրամ/	Լոտի մեկնարկային գինը /ՀՀ դրամ/	Նախավճարը /ՀՀ դրամ/	Մասնակցության վճարը /ՀՀ դրամ/
1	1	Հաստոց ներտաշող կոորդ. 2421	ք. Երևան, Լեփսիսի փող 25/1	700 000	560 000	28 000	13 850
2	2	Խառատահաստոց պտուտակ.- կտրող 1A 616		600 000	480 000	24 000	12 450
3	3	Խառատային պտուտակակտրող հաստոց 16K 20		1 000 000	800 000	40 000	17 450
4	4	Մամլիչ Д202М		250 000	200 000	10 000	5 450
5	5	Երկկողմանի փայլեցնող հաստոց 3Б853		250 000	200 000	10 000	5 450
6	6	Հարթ հղկման հաստոց 3B-711		750 000	600 000	30 000	14 450
7	7	Շառավղային գայլիկոնման հաստոց 2П53У		300 000	240 000	12 000	6 450
8	8	Ֆրեզային հաստոց 6P82		500 000	400 000	20 000	10 450
9	9	Եռակցման հաստոց МК1602		120 000	96 000	4 800	2 850
10	10	Խառատային պտուտակակտրող հաստոց 1М63		550 000	440 000	22 000	11 450
11	11	Ուղղաձիգ գայլիկոնման հաստոց 2H-125		250 000	200 000	10 000	5 450
12	12	Ֆրեզային հաստոց 6T80Ш		700 000	560 000	28 000	13 850
13	13	Ունիվերսալ ֆրեզային հաստոց 676П		500 000	400 000	20 000	10 450
14	14	Ունիվերսալ ֆրեզային հաստոց 676П		500 000	400 000	20 000	10 450
15	15	Ունիվերսալ ֆրեզային հաստոց 6725В		550 000	440 000	22 000	11 450
16	16	Սեղանի գայլիկոնման հաստոց 2M112		120 000	96 000	4 800	2 850
17	17	Շառավղային գայլիկոնման հաստոց 2K52		180 000	144 000	7 200	4 050
18	18	Օպտիկական բաժանարար սարք իր հենարանով		25 000	20 000	1 000	1 000
19	19	Ատամնա թործման հաստոց 5111		250 000	200 000	10 000	5 450
20	20	Թործման հաստոց 7A420		350 000	280 000	14 000	7 450
21	21	Հարթ հղկման հաստոց 3Б724		500 000	400 000	20 000	10 450
22	22	Լայնական ունեղման հաստոց 7Б35		400 000	320 000	16 000	8 450

23	23	Մետաղասղոցային հաստոց 8725	ք. Երևան, Լեփսիուսի փող 25/1	250 000	200 000	10 000	5 450
24	24	Սեղանի գայլիկունման հաստոց 2M112		120 000	96 000	4 800	2 850
25	25	Ունիվերսալ սրող- հաստոց 3Ճ 642B		120 000	96 000	4 800	2 850
26	26	Սրող-հղկող հաստոց 3Ե633		250 000	200 000	10 000	5 450
27	27	Ուղղաձիգ ֆրեզային հաստոց ՇՓ-15		700 000	560 000	28 000	13 850
28	28	Ատամնա ֆրեզային հաստոց 5K301		600 000	480 000	24 000	12 450
29	29	Խառատային պտուտակակտրող հաստոց 16505Ո		800 000	640 000	32 000	15 050
30	30	Խառատային պտուտակակտրող հաստոց 16K 20 ՈՓ		1 250 000	1 000 000	50 000	20 450
31	31	Հաստոց 2E-440A		300 000	240 000	12 000	6 450
32	32	Հաստոց 1Ո611B		250 000	200 000	10 000	5 450
33	33	Սարք կարծրաչափ TK14,150		60 000	48 000	2 400	1 700

* Աճուրդի կազմակերպչի անվանումը, գրնվելու վայրը՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10):

* Աճուրդի մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), որոնք աճուրդի մասին հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող աշխատանքային օրը (ժամը՝ 17:00-ն) մուծել են նախավճար, մասնակցության վճար և Կազմակերպչի կողմից ստացել մասնակցի վկայական (տոմս):

* Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

* Յուրաքանչյուր հաջորդ լուրի աճուրդը սկսվում է նախորդ լուրի աճուրդն ավարտվելուց հետո:

* Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցողները լուրին(լուրեր) կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածում՝ ք. Երևան, Լեփսիուսի փող 25/1 հասցեում, զանգահարելով 010-23-26-00 (137), քջջ. 095-00-69-62 հեռախոսահամարներով, յուրաքանչյուր երկուշաբթիից ուրբաթ օրերին՝ ժամը 09:00-18:00: Կազմակերպիչը պարտավորված է չի կրում աճուրդի ներկայացված լուրի (լուրեր) որակի համար: Աճուրդում գործում է հետևյալ սկզբունքը՝ «աճուրդի մասնակիցը «տեսել-համաձայնել է»:

Աճուրդի մասնակցության պայմանները՝

- Աճուրդի հաղթողը պարտավոր է իր միջոցների հաշվին ապամոնտաժել և տեղափոխել գույքը ք. Երևան, Լեփսիուսի փող 25/1 տարածքից:

- Աճուրդին կարող են մասնակցել այն անձինք, ովքեր վաճառվող լուրի նկատմամբ կարող են ունենալ սեփականության իրավունք, ինչպես նաև սահմանված ժամկետում Կազմակերպչին են ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթեր:

Աճուրդի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերն են՝

- Ֆիզիկական անձանց համար՝ նույնականացման քարտի պատճենը կամ անձնագրի պատճենը՝ հաշվառված էջով:

- Իրավաբանական անձանց համար՝ պետական գրանցման վկայականի պատճենը, գրանցման համարը, կանոնադրությունը, անհրաժեշտության դեպքում՝ նաև գույք ձեռք բերելու մասին ընկերության ընդհանուր ժողովի որոշումը,

- Նախավճարի վճարումը հաստատող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրած լուրի համար, պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը), մուտքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության թիվ 900018002171, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝ աճուրդի նախավճար՝ պարտադիր նշելով գույքի սեփականատիրոջ անվանումը, լուրի հերթական համարը: Նախավճարը հաղթող մասնակցի համար համարվում է գույքի վաճառքի գնի մաս և չի վերադարձվում:

- Մասնակցության վճարումը հաստատող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրած լուրի համար, պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը), մուտքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության թիվ 900018002981, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝ աճուրդի մասնակցության վճար՝ պարտադիր նշելով գույքի սեփականատիրոջ անվանումը, լուրի հերթական համարը: Մասնակցության վճարը գույքի (լուրի) գնի մեջ չի ներառվում և անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում:

- Հայտարարի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագիր (եթե աճուրդին ներկայանում է լիազորված անձը):

* Վերը նշված փաստաթղթերի առկայության դեպքում Կազմակերպիչը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական (տոմս):

Աճուրդի մասնակցի չհամարվող անձինք և այդ անձանց գործողությունների վարքագծի կանոնները՝

- Աճուրդին կարող են ներկա գրնվել դիպորդներ՝ աճուրդի մասնակցի չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճարը՝ 2000 ՀՀ դրամ:

- Դիպորդի տոմսերը վաճառվում են՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ում (հասցեն՝ ք.Երևան, Զաքիյան 10), իսկ աճուրդի օրը՝ Պետական գույքի կառավարման կոմիտեում ընդհուպ մինչև աճուրդի սկսվելը (հասցեն՝ ք.Երևան Տիգրան Մեծ 4):

- Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք աճուրդի անցկացման դաիլիճում զբաղեցնում են առանձին նստավայրեր:
- **Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանն ու ենթարկվել աճուրդի կանոնակարգով սահմանված կանոններին:**

Աճուրդի անցկացման և աճուրդում հաղթողին որոշելու կարգը՝

- Աճուրդի մասնակիցների **անձնագրի և մասնակցի վկայական(ներ)ի** առկայությունը պարտադիր է, լիազորված անձի դեպքում՝ նաև **լիազորությունները հաստատող փաստաթղթերը:**
- Նախքան աճուրդի սկսվելը Կազմակերպիչը գրանցում է մասնակիցներին, ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթերը և յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի (տոմսի) համարին համապատասխան, տրամադրում է քարտեր:
- Աճուրդը բացվում է հայտարարությամբ: Հայտարարության մեջ նշվում է աճուրդում վաճառվելիք լուրի անվանումը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, լուրի նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև աճուրդի անցկացման ձևը, այդ թվում՝ գնային հայտեր ներկայացնելու կարգը:
- Աճուրդը անց է կացնում աճուրդավարը: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լուրը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ (բարձրացնելով իր մասնակցության քարտը), որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույն հավելման (քայլի) չափով:
- Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից:
- Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդավարը վիճակահանության միջոցով որոշում է հաղթող մասնակցին:
- Լուրի (լուրերի) վաճառքից հետո աճուրդավարի կողմից հաղթող համարված մասնակիցը ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը և տվյալ լուրի վերաբերյալ աճուրդը համարվում է ավարտված:

Լուրի գնի վճարման կարգը, ժամկետները և նախավճարի վերադարձման կարգը՝

- **Աճուրդում գոյացած գինը, նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափը չգերազանցելու դեպքում, վճարվում է աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը, իսկ գերազանցելու դեպքում՝ արձանագրության ստորագրման օրվանից սկսած 10 օրվա ընթացքում՝ Հայաստանի Հանրապետության արժույթով:**
- Աճուրդում հաղթող ճանաչված անձին տրվում է վճարման հանձնարարագիր, ընդ որում նախավճարը հաշվարկվում է հաղթողի կողմից վճարման ենթակա գումարի մեջ:
- Աճուրդում հաղթող ճանաչված անձը վճարման հանձնարարագրում նշված գումարը սահմանված ժամկետում վճարում է և վճարման անդորրագիրը ներկայացնում Կազմակերպչին:
- **Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում հաղթող ճանաչված անձի կողմից մուծված նախավճարը չի վերադարձվում, իսկ աճուրդը համարվում է չկայացած:**
- Կազմակերպիչը աճուրդը կայանալուց կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի գրավոր դիմումի հիման վրա նախավճարը վերադարձնում է աճուրդում չհաղթած մասնակիցներին:

*** Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և աճուրդի անցկացման կանոնակարգին ծանոթանալու համար կարող եք դիմել «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10 կամ զանգահարել՝ 010-52-63- 32, 043-06-07-16 հեռախոսահամարներով:**

Ծանուցում.

- «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 9-րդ հոդված.
- 1. Այն պայմանները և տեղեկությունները, որոնք նշվել են աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ, ենթակա չեն փոփոխման, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխություններ են տրեղի ունեցել աճուրդով վաճառվելիք լուրի նկատմամբ սահմանափակումների մասով կամ փոփոխություններ են տրեղի ունեցել՝ կապված լուրի ֆիզիկական վիճակի հետ, կամ աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նախատեսվել է փոփոխությունների հնարավորությունը:
- Սույն մասով նախատեսված դեպքում աճուրդի կազմակերպիչը պարտավոր է մինչև նախորդող երեք օրը կատարել աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխություններ և լրացումներ (այսուհետ՝ հրապարակային ծանուցման փոփոխություն) այն ձևով, ինչպես կատարվել էր աճուրդի մասին հրապարակային ծանուցումը:
- 2. Եթե հրապարակային ծանուցման փոփոխությունը չի կատարվել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում և կարգով, ապա աճուրդի կազմակերպիչը կրում է մասնակիցների կրած իրական վնասների ռիսկը:
- 3. Աճուրդի մասին հրապարակային ծանուցում կատարելուց հետո թույլատրվում է հրապարակային ծանուցման փոփոխությամբ կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:

Քրեական օրենսգրքի 196 հոդված.

Հրապարակային սակարկությունների անցկացման կարգը չարամտորեն խախտելը, որը խոչոր վնաս է պարճառել գույքի սեփականատիրոջը, սակարկություններ կազմակերպողին, գնորդին կամ այլ տնտեսավարող սուբյեկտին՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

***Ուշադրություն՝ աճուրդի ընթացքը տեսաձայնագրվում է, դրա օրինականությունը ապահովելու նպատակով:**